

Մարիամ Մ. Մարգարյան
Քաղաքակ. գիտ. դոկտոր

ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Հայաստանի Հանրապետության 100-ամյակի առիթով*

Բանալի բառեր–պետություն, ինքնիշխանություն, պետականություն, պատմականություն, սահմանադրություն, սահմանադրականություն, կառավարող ընտրանի, անձ, հասարակություն:

Մուտք

Նոր աշխարհակարգը ուղղահայաց և ցանցային կառավարման սկզբունքների զուգամիտման իր կառուցակարգերով հայտնվել է համաչափ և անհամաչափ սպառնալիքների, անորոշ քաղաքական զարգացումների մեջ: Մինչդեռ ըստ Հ. Քիսինգերի՝ նոր աշխարհակարգը շարունակելով հենվել Վեստֆալյան համակարգի վրա, պետք է կառուցվի «համաձայնեցված ռազմավարության մշակման միջոցով՝ ուղղված առանձին տարածաշրջանների ներսում կարգի հայեցակարգի ստեղծմանը և այդ տարածաշրջանային կարգերի փոխադարձ կապակցմանը»¹: Նման անորոշություններից և տարաբնույթ բախումներից խուսափելու նպատակով Հ. Քիսինգերը առաջարկում է զարգացնել պետության ինքնիշխանությունը:

1. Ինքնիշխանության արժեքային բազմաչափությունը

Ինքնիշխանությունը պետության բացարձակ հատկություն է՝ արտահայտված բարձրագույն իշխանություն կրողի կողմից սեփական կամքը անկախ, ինքնուրույն ձևավորելու և իրականացնելու քաղաքական բովանդակությամբ, ինչպես նաև պետական իշխանության մարմինների կառուցվածքի և լիազորությունների սահմանադրա-իրավա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 07.06.2018:

¹ Kissinger H., World Order, Penguin Random House LLC, New York, 2014, p.p. 371-375.

կան ձևի ամրագրմամբ: Այս համատեքստում նպատակահարմար է ինքնիշխանությունը դիտարկել գոյաբանական, նյութական, իրավաքաղաքական, քաղաքակրթական արժեքների և սկզբունքների արդիականացման մակարդակներում: Ունենալով **իրավաքաղաքական բնույթ՝ պետական ինքնիշխանությունը՝ որպես** բազմաչափ երևույթ, ներառում է. 1) պետության իշխանության գերակայությունը նրա ողջ տարածքում, 2) պետության ինքնիշխանության կամարտահայտման աղբյուրը ժողովրդական ինքնիշխանությունն է, 3) պետության իշխանության անկախությունը մյուս պետություններից և միջազգային հարաբերությունների այլ սուբյեկտներից, 4) ինքնիշխանության անբաժանելիությունը, 5) պետության ինքնիշխանության բացառիկությունը նրա ամբողջ տարածքով մեկ, 6) ինքնիշխան իրավունքների անօտարելիությունը, 7) ինքնիշխանությանը բնորոշ են պետական իշխանության անկախությունը, միասնականությունը, գերակայությունը, քանի որ «Առանց ինքնիշխան պետության չի կարող լինել ապահով ժողովրդավարությունը»²:

Ակնհայտ է, որ ինքնիշխանության արժեքայնությունը արդիականանում է պետության զարգացմանը համընթաց, այդ պատճառով ինքնիշխանությունը անհրաժեշտ է դիտարկել քաղաքական և սոցիալական կարգի կերպավորման հրամայականների համատեքստում, որպես ընտրանու և հասարակության կոլեկտիվ կամքի գույամիտման գիտակցված դրսևորման արդյունք: Որպես այդպիսին՝ «Պետությունն իր բնույթով ունի միավորող հատկություն, բայց ոչ այն պատճառով, որ կոչված է ամեն բան կլանելու, այլ այն վերաբերում է քաղաքական հասարակությանը ամբողջությամբ, այն սահմանում է հասարակության կենսաձևը, կառուցում է ընդհանուր կյանքի հիմքերը, պայմանավորում է մնացած ամեն բան»³: Այս դիտանկյունից պատմականորեն պետության ինքնիշխանությունը հիմնավորվում է միայն հետևյալ գործոններով՝ **ընդհանուր սահմանների անվտանգության ապահովում՝ որպես ազգի, հասարակության կենսագործունեության կազմակերպման, վերարտադրման, ազգային ինքնության պահպանման և արդիականացման համար անհրաժեշտ սոցիալական և քաղաքական տարածության ստեղծման անհրաժեշտություն:** Ակնհայտ է, որ «...Պետությունը գործակալ է, որը ներկայացնում է հասարակությունը իր ներսոցիալական հարաբերություններում: Այն միևնույն ժամանակ ներկայացնում է հասարակությանը, որպես սեփական պատմությունը կերտողի: Այն հաստատում է ներկայի կապը անցյալի և ապագայի ինչպես նաև ներքինի և արտաքինի միջև: Չկա պետություն, որը չունենա պատերազմելու կամ խաղաղություն կնքելու իրավունք, հետևաբար չկա պետություն, առանց հասարակության կյանքի և ապագայի նկատմամբ պատասխանատվության: Չկա նաև պետություն, որը չլինի հասարակական կարգի, այսինքն՝ վերարտադրման մեխանիզմների ամբողջության երաշխավորը»⁴: **Վերոշարադրյալը հիմք է, որպեսզի պետական ինքնիշխանության արժեքային համակարգի արդիականացման**

2 **Լիսց Խ., Ալֆրեդ Ս.,** ժողովրդավարության անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա, Եր., Կովկասի ինստիտուտ, 2010, էջ 43:

3 **Бенетон Ф.** Введение в политическую науку. М.: «Весь мир», 2002. с. 144.

4 **Турен А.,** Возвращение человека действующего. Очерк социологии, М., «Научный мир», 1998, с. 72 http://socioline.ru/files/5/39/alain_touraine.pdf

միտումները դիտարկենք Հայաստանի Հանրապետության հարյուրամյա տարեդարձի արժևորման և ռազմավարական անվտանգ ապագայի ապահովման դիտանկյունից:

2. Պատմականության (historism) էության ու բնույթի մասին

Պատմականությունը գիտական ճանաչողության սկզբունք է, ըստ որի՝ իրերն ու երևույթները, դիտվում են իրենց ծագումնաբանության, գոյաբանության և անցյալ – ներկա – ապագա եռաչափության ծիրում ունեցած զարգացման մեջ⁵: **Պատմականությունը՝** որպես փիլիսոփայական սկզբունք, պահանջում է դիտարկել ցանկացած երևույթ, իր ծագման, զարգացման և կերպավորվածման մեջ: Ընդունելով իրականությունը որպես ժամանակի մեջ դրսևորվող երևույթ՝ պատմականությունը օբյեկտի համակարգային բնույթը դիտարկում է իր զարգացման բազմաչափության տիրույթում: Պատմականության անհրաժեշտությունը՝ որպես հասարակության զարգացման էությունը բացահայտող երևույթ իրենց ժամանակին հիմնավորել են Հերակլիտը, Պլատոնը, Արիստոտելը, հետագայում նաև Ջ. Վիկոն, Վոլտերը, Հեգելը, ինչպես նաև Մ.Վեբերը Կ. Մարքսը: Երևույթները պատմական հոլովություն և ապագայաբանական հեռանկարում դիտարկելը դարձավ հասարակության զարգացման հիմնախնդիրների կենտրոնացված բացահայտման այնպիսի բնութագրիչ, որի օգնությամբ կանխատեսվում է հանրային շահի զարգացման հեռանկարը, անհանդուրժողականության կուտակումը, անարդարության դեմ պայքարի կառուցակարգերը և պատմության ընթացքը՝ որպես աշխարհի կառավարման «աստվածային պլանի» իրականացում (պրովիդենցիալիզմ), ինչպես նաև իրականությունը՝ որպես անցյալի իսկության արտացոլում մեկնաբանելը⁶:

Պատմականությանը՝ որպես բազմաչափ երևույթի, բնորոշ է այն մեկնաբանությունը, որ «1) պատմական և սոցիալական երևույթները պայմանավորվում (բնորոշվում) են պատմությամբ: Ձևավորված է համոզմունք (հավատ), որ պատմական երևույթները կարգավորվում (ղեկավարվում) են բնական օրենքներով: Ուստի պատմական զարգացմանը վերաբերվում են որպես մարդու գոյության ամենահիմնական միտումի: Այդ դիտանկյունից արտիստիկ և ճարտարապետական համատեքստում անցյալ ոճերի նկատմամբ չափազանց մեծ վերաբերմունք է ցուցաբերվում»⁷:

Պատմականությունը, ներառելով պատմական հիշողությունը, միաժամանակ և անցյալի վերլուծման, ընտրության ակտիվ կառուցողական գործընթաց է, և այն տեղեկատվական հոսքերի վերականգնում, որոնք տվյալ քաղաքական ժամանակում կապահովեն առավելագույն կենսունակություն: Այս համատեքստում կարևորում ենք «անցյալի ընտրություն» եզրույթը, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ մակարդակում պատմական հիշողությունից կանչել այն հատվածը, որի հետագա գեներացումը կապահովի կենսունակություն, միևնույն ժամանակ՝ ֆիլտրելով տեղեկատվական աղ-

5 Տե՛ս **Никитина А.**, Историзм социально-политического явления (Отношение социологии и историографии в свете проблемы историзма), «Полис». 2000. N 5, с. 167:

6 Տե՛ս **Соловьёв Э.**, Судьбическая историософия Хайдеггера, «Прошлое толкует нас», М., 1991. с. 353:

7 <https://en.oxforddictionaries.com/definition/historicism>

մուկը: Հետևաբար պատմական հիշողությունը ստատիկ երևույթ չէ, այլ կարող է դինամիկ փոփոխվել՝ պայմանավորված «Ես»-ին ուղղված ժամանակի մարտահրավերներով: Նշենք, որ ինչպես անցյալն է ազդում ներկայի վրա, այնպես էլ ներկան է մեծապես որոշում, թե ինչպես կրնակավի և կվերծանվի անցյալը: Ուստի անցյալին դիմելը տարբեր խմբերի և ինստիտուտների միջև կապեր հաստատելու ճկուն և առաձգական մեխանիզմ է, որոնց հիման վրա էլ կառուցվում է հանրային անվտանգությունը: Ավելին, Է. Սմիթի կարծիքով, ազգակառուցման ու պետականակառուցման գործընթացում կարևորագույն դեր ունեցող, ընդհանրապես, ներկա աշխարհի սոցիալական ու քաղաքական ամենահզոր ուժերից մեկը՝ ինքնիշխանության կենտրոնական հարցը, ներկայի ստեղծման մեջ անցյալի դերի հարցն է⁸: Այս տեսանկյունից պատմական հիշողությունը հիմնված է մարդկանց՝ իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ գիտելիքների և վերաբերմունքի, ինչպես նաև ուրիշներին ճանաչելու վրա⁹: Այսինքն՝ կարևորություն է ստանում հետևյալ հարցը. ազգակառուցման և պետականակառուցման նպատակով պատմական հիշողության ո՞ր հատվածի վրա է անհրաժեշտ կենտրոնացնել ուշադրությունը, և ո՞ր հերոսի «կյանքն ու գործունեությունը» մատուցել հասարակությանը: Այս հաստատեքստում կարևորվում է Լ. Պայի ասիական ժողովուրդների օրինակով կատարված այն դիտարկումը, որ « ասիական ժողովուրդները ունենալով ամուր Էթնիկ, մշակութային, կրոնական և նույնիսկ ռասայական ինքնանույնականացում, դեռևս բախվում են խնդիրների՝ առանցքային և կարևորագույն արժեքների ընտրության հարցում, որոնք պետք է լինեն ազգային ինքնության հիմնական բաղկացուցիչները: Դրանք պետք է լինեն այն արժեքները և գաղափարները (իդեալները), որոնք պետությանը կօժտեն լեգիտիմությամբ»¹⁰:

Որպեսզի պատմական փաստերի նորովի մեկնումը պահպանի ոգեղենությունը և խարիզմատիկ լեգիտիմությունը, անհրաժեշտ է, որ գործողությունների համակարգը համապատասխանի օբյեկտիվության, վստահության, թափանցիկության, հուսալիության և այլ նմանատիպ չափանիշներին, որի միջոցով քաղաքացիների գիտակցության մեջ վստահություն է հաստատվում դրանց իսկության մասին: Պատմական հիշողությունը քաղաքական վարքը, գիտակցությունը ձևավորող կարևոր բաղկացուցիչներից է: Այն իր էներգիայով (շատ դեպքերում՝ չգիտակցված) հասարակությանը (ազգին, էթնոսին, անձին) մղում է ինչպես որոշակի ինստիտուցիոնալացված վարքագծի, այնպես էլ ենթարկվելով էստրոպիայի՝ թույլ է տալիս տրոհել (բաժանել) քաղաքական տարածությունն ու ժամանակը: Հանրագումարելով կարող ենք արձանագրել, որ առանց պետականության կամ պետականության մասին երազանքի՝ ո՛չ ազգը և ո՛չ էլ հասարակությունը չեն կարող իրենց անվտանգությունն ապահովել: Այդ պատճառով էլ պետականության կառուցվածքում ինքնիշխանության սկզբունքի ապահովումը պատմականության հաշվառմամբ ազգի կյանքում կարևորագույն դեր է խաղում: Սակայն,

8 Տե՛ս **Anthony D.**, *Smith Myths and Memories of the Nation*, Oxford, New York, 1999, p. 165-166:

9 Տե՛ս **Левин-Строс Клод**, *Узнавать других, «Антропология и проблемы современности»*, пер. Чебучева Елизавета, М., «Текст», 2016. с. 160:

10 **Lucian W. Pye** – *International Relations in Asia: Culture, Nation and State*. Published by The Sigur Center for Asian Studies, July 1998. P. 9. <https://www2.gwu.edu/~sigur/assets/docs/scap/SCAPI-Pye.pdf>

բաց հասարակության գաղափարախոս Կ. Պոպպերը թերահավատորեն է վերաբերվում հասարակական-քաղաքական համակարգի ինստիտուտների ժողովրդավարացման հիմնախնդիրներում պատմականության ունեցած համընդգրկուն ազդեցությանը. «Գալիքը կախված չէ հենց մեզնից, իսկ մենք էլ պատմական որևէ տեսակի անհրաժեշտությունից կախված չենք»¹¹: Այնուամենայնիվ, ՀՀ-ում պետության (և ընդհանրապես, կառավարման, հատկապես պետական կառավարման) ինքնիշխանության և ժողովրդավարացման գործընթացի վերլուծությունն անհնար է առանց պատմական դաշտի քննարկման, քանի որ Հայաստանի հաջորդական պետությունների վերածնունդը և նրանց գործառնումը կրել և կրում են այդ դաշտի խորքային ազդեցությունը:

Համաձայն գործառնական մոտեցման հիմնավոր պնդման՝ **քաղաքական համակարգը, որը միջանկյալ է պատմականության դաշտի և սոցիալական կազմակերպման միջև, ազդվելով առաջինից՝ ուղղորդում է երկրորդին**: Գործառնական հայեցակարգը Ա. Թուրենն օգտագործել է որպես գործունեության սոցիոլոգիայի (ակցիոնալիզմ) մեկնակետ, որը բխում է պատմական սուբյեկտի հայեցակարգից: Տվյալ պարագայում Ա. Թուրենի կողմից պատմականության հայեցակարգն այլ իմաստով օգտագործելը հիմնավորվում (բացատրվում) է նրանով, որ վերջինիս բազմաշերտ բովանդակությունից «բացառվում կամ մերժվում» են սոցիալական փաստերը ոչ սոցիալական սկզբունքներով մեկնաբանող մետասոցիալական երաշխիքները: Պատմականությունն այն հեռավորությունն է, որը ազդում է հասարակության գործունեության վրա. այն գործունեության, որի միջոցով նա սահմանում է իր պրակտիկայի կատեգորիաները (Ա. Թուրեն): Ինստիտուցիոնալ համակարգը «այնպիսի կառուցակարգերի համախումբ է, որոնց միջոցով պատմականության դաշտը փոխակերպվում է սոցիալական կյանքի կանոնների մի համախմբի, որն էլ, իր հերթին, կանխորոշում է կազմակերպությունների գործառնությունները (ընդգծումը մերն է – Մ.Մ.)»¹²:

ՀՀ-ում հաստատված կառավարման ինստիտուցիոնալ նոր համակարգի վերլուծության համար թուրենյան մոտեցման օգտագործումը մեր կողմից հիմնավորվում է այսպես: **Հայաստանի երրորդ հանրապետության ինստիտուցիոնալ համակարգը նախորդած Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության (ՀԽՍՀ-ի) բնականոն արդիականացման արդյունքը չէ, քանի որ այդ երկուսի հիմքում ընկած են բացարձակապես հակադիր գաղափարական համակարգեր: Նույն տրամաբանությամբ էլ հնարավոր չէ Խորհրդային Հայաստանը Առաջին Հանրապետության բնականոն արդիականացման արդյունքը համարել, քանի որ վերջինիս բռնի խորհրդայնացման հետևանքով արմատապես փոխվեց գաղափարական համակարգը և դրա հենքի վրա կատարված ինստիտուցիոնալացումը**: Մյուս կողմից բոլոր երեք պետությունների հռչակման պատմական նախադրյալները տարբեր են. այսինքն՝ հայ հանրույթի կողմից իր բնապատմական և միջազգային շրջակայքի նկատմամբ ունեցած հարաբերությունների գիտակցումն ու իմաստավորումը տարբեր է եղել: Այս

11 Պոպպեր Կ. Բաց հասարակությունն ու նրա թշնամիները (թարգմ. Ս. Հարությունյանի), Եր.: «Հայաստան», 2001, էջ 3:

12 Կուրեն Ա., Возвращение человека действующего. «Очерк социологии». Перевод с французского. М., «Научный мир», 1998, с. 196.

համատեքստում, բնականաբար, հայ հասարակությունում տարբեր տեղակայումների համադրությամբ հասունացել է իր իսկ կոլեկտիվ **ազատության / անվտանգության երկվության փոխհարաբերությունների ինստիտուցիոնալացման պահանջմունքը**:

Ասվածը հիմնավորելու նպատակով նշենք, որ Առաջին Հանրապետության հաստատման ամենաէական նախադրյալներից էր տարածաշրջանում Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակման հետևանքով նախկինում գոյություն ունեցած որոշակի կարգի՝ Անդրկովկասյան ժողովրդավարական դաշնակցային հանրապետության (ԱԺԴՀ) և Անդրկովկասյան սեյմի փլուզուման հետևանքով հարուցված և հայ հանրության կողմից կարևորված՝ քառսին դիմակայելու, սեփական հանրային անվտանգությունն ապահովելու գիտակցությունը: Այս համատեքստում որոշիչ էին նաև ազգային անվտանգությունն ապահովելու գիտակցության ռացիոնալացմանը նպաստած (նկատի ունենք Մայիսյան հերոսամարտերը) այն գործողությունները, որոնք հաջորդեցին 1915 թ. Հայոց Մեծ եղեռնին:

Ցեղասպանությունից և հեղափոխությունից հետո Հայաստանը հայտնվեց քաղաքական նոր անորոշությունների մեջ՝ փլուզված տնտեսությամբ, փախստականներով ու գործազուրկներով, առանց դաշնակիցների, առանց հիմնավորված գաղափարախոսության: Աբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակում 1918 թվականի մայիսի 28-ին հռչակված նորաստեղծ հայկական պետության համար չափազանց բարդ էր պահպանել ինքնիշխանությունը՝ դիմակայելով արտաքին և ներքին քառսին: Այնուամենայնիվ, 1918-1920 թթ. Հայաստանում պետությունը իր բոլոր թուլություններով և թերություններով հանդերձ, և՛ վերականգնվեց, և՛ դարձավ ազգային ինքնիշխանության պատվար: Փաստորեն Հայոց պատմության մեջ առաջին անգամ ներդաշնակվեցին **ազգային ինքնիշխանության և պետական ինքնիշխանության գաղափարները**:

1918 թ. սեպտեմբերի 28-ին Հայաստանի խորհրդի ընդունած «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենքում պաշտոնապես արձանագրվեց, որ երկրի ողջ ազգաբնակչության շուրջ 45 տոկոսը գաղթական է¹³: Հայաստանի անկախության առաջին տարեդարձի կապակցությամբ, 1919 թ. մայիսի 26-ին, ՀՀ կառավարությունը՝ ապրիլի 27-ին խորհրդարանի կողմից իրեն տրված օրենսդրական իրավասությունների հիման վրա ընդունեց «Միացյալ, Անկախ Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, իսկ մայիսի 27-ին՝ «Հայաստանի խորհրդի համալրման մասին» օրենքը: Նմանօրինակ դիրքորոշումը ելնում էր այն գաղափարից, որ Միացյալ Հայաստանը պիտի ունենա նաև միացյալ խորհրդարան: Այդ նպատակով որոշվեց Հայաստանի խորհրդարանի կազմը համալրել արևմտահայ 12 ներկայացուցչով: Սակայն 1919 թ. հունիսի 4-ին Սոցիալ-դեմոկրատական խմբակցության և ՀԺԿ պատգամավորները մեղադրելով կառավարությանը պետական հեղաշրջում կատարելու փորձի մեջ՝ հանդես եկան հայտարարությամբ և ցուցադրաբար հեռացան խորհրդարանի դահլիճից: Դահլիճում մնացին միայն ՀՅԴ խմբակցությունը և արևմտահայ 12 պատգամավորներ:

13 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918 - 1920 թթ.), Եր., 2005, էջ 110:

րը, որոնք ևս դաշնակցականներ էին¹⁴: Դրանից քիչ անց՝ 1918-ի օգոստոսին նորընտիր վարչապետ Ալ. Խատիսյանը Ամերիկայից ստացավ նախկին վարչապետ Հ. Քաջագունու ծրագրային բովանդակությամբ նամակը, որտեղ առաջարկվում էր առաջնորդվել զուտ պետական մտածելակերպով¹⁵: Այսպիսով՝ ինչպես ՀՅԴ ներսում, այնպես էլ խորհրդարանական խմբակցությունում առկա էին երկու թևեր՝ **պետական** և **կուսակցական** մտածողությունների կողմնակիցները: Եթե առաջին հոսանքը ներկայացնում էին Հովհ. Քաջագունին, Ալ. Խատիսյանը, Ս. Վրացյանը, ապա երկրորդը՝ Ռուբենը (Մ. Տեր-Մինասյան), Արշակ Ջամայանը, Վ. Խորենին, Վ. Նավասարդյանը, և ուրիշներ: Վերջիններս ունեին ընդգծված ընկերվարական հայացքներ:

Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում ևս ՀՅԴ խորհրդարանական խմբակցության անդամները տարբեր դիրքորոշումներ ունեին: Փարիզի խաղաղության համաժողովում ՀՅԴ խմբակցությունը պաշտպանում էր արևմտյան քաղաքական դիրքորոշումը: Սակայն քաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխման հետևանքով պատգամավորական խմբակցության զգալի մասը 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրեց Երևանի համաձայնագիրը, որով իշխանությունը հանձնվեց Հայեդեդկոմին¹⁶: Հետահայաց ընդհանրացնելով՝ կարող ենք եզրակացնել, հանրապետությունը արտաքին և ներքին բազմաբնույթ մարտահրավերներին պատասխանելու ժամանակ ցուցաբերեց իրավիճակային մոտեցում¹⁷, ռացիոնալ չկողմնորոշվեց և չգնահատեց բոլշևիզմի հաղթանակով տեղի ունեցած փոփոխությունները: Սակայն, մեր կարծիքով, Առաջին Հանրապետության գործունեության գնահատման չափանիշ պետք է համարել ոչ թե ինստիտուցիոնալ համակարգի իրավական անկատարությունը, տնտեսական ու սոցիալական ծրագրերի ուղղվածության չհիմնավորվածությունը, այլ **անկախ և միացյալ Հայաստանի պետականության գաղափարի պաշտպանությունը: Այս դիտանկյունից Առաջին Հանրապետությունը միայն իր ներկայությամբ վերկանգնեց հայի՝ պետականության վերածննդի յոթհարյուրամյա երազանքը:**

Առաջին և երրորդ հանրապետությունների համեմատությամբ Խորհրդային Հայաստանի ինքնիշխանությունը ածանցված էր ԽՍՀՄ կազմում de facto, և ոչ թե de jure: Ըստ էության՝ երրորդ Հանրապետության և նրա ինստիտուցիոնալ համակարգի ծնունդը գերազանցապես հասարակության ներսում պատմականության և որակապես այլ աշխարհաքաղաքական կերպափոխումների ազդեցության ներքո տևական ժամանակահատվածում խմորված գործընթացների և ոչ թե քաղաքական համակարգի գերագույն ինստիտուտի՝ պետության փոխակերպման արդյունք է: Պետության փոխակերպման մասին խոսելը արդարացված կլիներ միայն ԽՍՀՄ առանցքը կազմող Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական պետությունների համար, երբ պետությունը (թող որ սահմանափակ ազատության աստիճանով) իր ինստիտուտներով առկա էր, իսկ Հայաստանի և նախկին Խորհր-

14 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918 – 1920 թթ.), Եր., 2005, էջ 210:

15 Տե՛ս **Քաջագունի Հ., Հ. Յ.** Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 30:

16 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918 – 1920 թթ.), Եր., ՀՅԴ հրատ., 2005, 410:

17 Տե՛ս **Վաղարշյան Ա.**, Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918 – 1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2012 թ., էջ 32–33:

դային Միության մյուս հանրապետությունների պարագայում քաղաքական համակարգի ինստիտուտները Միսկվայից ածանցված էին: Հետևաբար՝ Հայաստանի երրորդ հանրապետությունը հայ հանրույթի պատմականության կողմից ուղղորդված, հասարակության կոլեկտիվ «Մենք»-ի և անհատական «Ես»-ի գիտակցականի մակարդակում կարևորված **պատմական գործունեության ժառանգականության** խզման արդյունքում կուտակված հիմնախնդիր էր:

Օժտված լինելով ուժեղ պատմական հիշողությամբ՝ հայ հանրույթի հասարակական ենթահամակարգերը գտնվում են ոչ թե փոխազդեցության հորիզոնական, այլ աստիճանակարգային կապերի մեջ: Այսինքն՝ որքան էլ նրանք հարաբերական ինքնուրույնություն ունենան, փոխադարձաբար գտնվում են աստիճանակարգային ենթակայության և գերակայության վիճակում: Միաժամանակ այդ ենթահամակարգերը «հազեցված» են հայ հանրույթի սոցիալ և էթնոմշակութային տեքստերով (պատմականությունն այն ըստ տարբեր չափումների տարրալուծում, ներառում է իր ենթահամակարգերի մեջ), որոնց դերակատարությունը հսկայական է նրանցից յուրաքանչյուրի գործառնության մեջ, իսկ վարքաբանական և անհատապաշտական գործոններն այնքան էլ որոշիչ չեն, որքան, ասենք, բազմաբաղադրյալ ամերիկյան անհամասեռ հասարակության պարագայում (հակառակ դեպքում տեղին կլինեի, օրինակ, օգտագործել Տ.Պարսոնսի հայեցակարգերը¹⁸): Իսկ Թուրեմի մշակած ակցիոնալիստական տեսությունը լավագույնս բացատրում է նման զարգացումների արդյունք հանդիսացող ինստիտուցիոնալ համակարգերը:

1980-ական թվականների կեսերից ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության կողմից որդեգրված «**վերակառուցման**» քաղաքականությունը լավագույն պայմաններ ստեղծեց, որպեսզի հայոց պատմականության դաշտը թելադրի նոր ինստիտուցիոնալ համակարգի (ներառյալ նաև պետության) լինելիությունը և որպիսությունը և ուղղորդի սոցիալական կազմակերպումը: Քաղաքական գիտակցության մեջ ինքնիշխան պետականության բազմադարյան չգոյության իրողության հետ այլևս չհաշտվելը, այդ իրողության դեմ ընդվզումը, սեփական ինքնիշխան պետականությունը վերականգնելու անհրաժեշտության գիտակցումը ամենաէական տեղաշարժն էր հայոց պատմականության «ճանաչողության կերպ»-ի ենթահամակարգում: Իսկ գերագույն նպատակը՝ անկախ պետականության ստեղծումը, արդեն հասունացել և դարձել էր Հայոց համագգային շարժման (ՀՀՇ) քաղաքական օրակարգի գերակա խնդիր: Այս դիտանկյունից նշենք, որ հայ հասարակության համար ընդհանրական մշակութային մոդելը ազդված էր դերակատարների ճանաչողության կերպում արձանագրված տեղաշարժից: Հենց այդ նոր կողմնորոշումներն էլ կանխորոշեցին ձևավորվող սոցիալական հարաբերությունների դաշտը և ուրվագծեցին ազատության, անկախության կողմնակից դասի ու նախկին աշակիցների հարաբերությունների բնույթը: Ակնհայտ է, որ **մշակութային մոդելը, ընդգրկելով և արտապատկերելով հասարակական հարաբերությունները, բացահայտում է նաև այն գերագույն**

18 Տե՛ս **Փարսոնս** Թ. Система современных обществ, Пер, с англ. Л.А. Седова и А.Д. Ковалева, под пед. М.С. Ковалевой. М., «Аспект Пресс», 1998, с. 10-11:

նպատակներն ու սպասումները, որոնք, կարող են համախմբել ամբողջ հասարակությանը:

Քաղաքական արդիականացումն ապահովող մշակութային մոդելին մնում էր տոսկ այդ կուտակումն ուղղել իր իսկ նախանշած կողմնորոշիչների ձեռքբերմանը: Այդպիսով՝ բոլոր ենթահամակարգերում (**ճանաչողության կերպ, մշակութային մոդել, կուտակում**) էական տեղաշարժ արձանագրած և որակապես նոր անհավասարակշիռ վիճակում հայտնված պատմականությունը ի զորու էր նոր ազդակներով սնուցելու պատմական գործունեության և դասային հարաբերությունների համակարգերը: Վերջիններիս մեծ խզման պարագայում ի հայտ եկած միանգամայն սպասելի (օրինակ՝ սոցիալիստական հետարդյունաբերականացման բնապահպանական հիմնահարցեր) և արտաքուստ անսպասելի, նոր (անկախության ինստիտուցիոնալացումը) սոցիետալ հիմնախնդիրներն էլ, բնական է, պետք է համարժեք սոցիալ-քաղաքական շարժումների դրդապատճառ դառնային: Գորբաչովյան հրապարակայնության միջավայրում «մաքուր» սոցիալական հարցադրումներով հագեցած շարժումը վերաձեց քաղաքականի՝ օրակարգում ներառելով դարաբաղյան հարցը պատմական արդարության վերականգնման հիմքի վրա լուծելու պահանջը: ԽՍՀՄ քաղաքական համակարգին առաջադրված այս պահանջին գերագույն քաղաքական ղեկավարության կողմից ոչ հավասարաբաշխ վերաբերմունքի ցուցաբերման հետևանքով Հայոց համագգային շարժման օրակարգային խնդիրների կիզակետ դարձավ Հայաստանի անկախության հարցի առաջադրումը: Այստեղ հարկ է նշել, որ հին հանրույթներին բնորոշ ուժեղ պատմականության ազդեցության ներքո քաղաքական շարժման օրակարգ ներառվեցին ինչպես պահանջատիրության, այնպես էլ այլ խնդիրներ: Սակայն բախտորոշ էր այն հանգամանքը, որ անկախության վերանվաճման գաղափարը գերակա հոչակվեց, որին աստիճանակարգային (ինքնա)կազմակերպման ենթարկվեցին քաղաքական շարժման մյուս հարցադրումները: Այդպիսով՝ **պետականության ինստիտուցիոնալացման հանրային պահանջումները զուգամիտեց քաղաքական գործընթացի օրակարգի բոլոր խնդիրներին:**

Ջուտ սոցիալականից քաղաքականի վերաճած Հայոց համագգային շարժումը դրսևորվեց իր բոլոր հնարավոր ձևերով. **ինտեգրացումը** լավագույնս արտահայտվեց ազգային միասնության տեսքով, **մասնակցությունը**՝ քաղաքական համակարգը հիմնավորապես ցնցող հանրահավաքների, ցույցերի տեսքով, **դիմադրությունը**՝ գործող վարչակարգին և նրա կայացրած որոշումներին քաղաքացիական անհնազանդության, գործադուլների, հացադուլների տեսքով:

Հանրության որդեգրած սոցիալական շարժման այս ձևերին հակադրվում էին **հետապնդումները** ԽՍՀՄ պետական վարչակազմի կողմից («Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալում), ինչն էլ մյուս կողմից կարևորեց այլախոհի սոցիալական դերակատարումը՝ լիցքավորելով և արագացնելով հասարակության սոցիալ-քաղաքական շարժումները: Նշված շարժումների արդյունքում ավելի հստակ տարանջատվեց նոր դասային հարաբերության սահմանագիծը, որը փոխարինելու էր գալիս նախկին դասային հարաբերությանը. մի բևեռում ազատություն-անկախություն շարժ-

մանն աջակցող սոցիալական դասն էր, մյուս բևեռում՝ շարժմանն ընդդիմացող ԽՍՀՄ-ի նոմենկլատուրան: Չնայած զանգվածային մարզինալ-պոպուլիստական մասնակցությանը, սոցիալական շարժումների տարաբնույթ դրսևորումներին և ստեղծված մթնոլորտում հեղափոխականության տարրերի պարունակմանը՝ ձևավորված նոր դասային բախումը, այնուամենայնիվ, չհանգուցալուծվեց հեղափոխության ճանապարհով: Ձևավորված նոր սոցիալական դասի քաղաքական կամքն ու պահանջունքներն արտահայտող ներկայացուցիչները 1991 թ. գործող ԽՍՀՄ-ի ինստիտուցիոնալ կարգի ու արարողակարգերի շրջանակներում պատգամավորական բավարար տեղեր ստացան նախկին քաղաքական համակարգի ներկայացուցչական ինստիտուտի՝ Գերագույն խորհրդի ընտրություններում (կենսագործունեության սոցիալիզմ-կոմունիզմ պրակտիկայի և գաղափարախոսության մերժման արդյունքում Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն այլևս լեգիտիմ և մեծամասնություն կազմող նոր դասի կամքի արտահայտիչ չէր ընկալվում, իսկ Գերագույն խորհուրդը միակ մարմինն էր, որի ձևավորումը, ՀԽՍՀ սահմանադրական դիզայնի համաձայն, նախատեսված էր ժողովրդավարական սկզբունքներով): Նոր սոցիալական դասի ներկայացուցիչներին հաջողվեց ներկայացուցչական մարմնում գրավել քաղաքական ղեկավարման օրինական իրավունքը և ամրագրել աջակցող դասի ու նրա սոցիալ-քաղաքական պահանջունքների հաղթանակը: Ակնկալվող նոր ինստիտուցիոնալ համակարգի ազդարարումը դարձավ Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումը 1990 թ. օգոստոսի 23-ին¹⁹:

Անհրաժեշտ ենք համարում առավել հանգամանորեն անդրադառնալ Հռչակագրի այն դրույթին, որով անկախ պետականության հիմքում դնելով միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները հռչակվեց, որ հայոց պետականության կրողը ՀՀ-ի ժողովուրդն է, որն «...իր իշխանությունը իրականացնում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով...»²⁰: Այս համատեքստում Հայաստանի անկախության Հռչակագրի նախաբանում որոշակի իմաստ էր տրվում առաջին և երկրորդ պետականությունների օրոք հայ հանրության պրակտիկաներին: Ընդ որում, եթե Առաջին Հանրապետության օրոք իր ծավալած պրակտիկայի իմաստավորման ուղղակի անդրադարձն առկա է, ապա երկրորդի օրոք իմաստավորումը ակնհայտորեն բխում է հօգուտ առաջինի մասին արտահայտվելու հանգամանքից. սա հաստատում է նրանց անուղղակի կատարած հակադրում-համեմատությունը: Այսինքն՝ թվով երրորդ պետության ծնունդը ոչ միայն հայի ազատատենչ ճանաչողության կերպի, մշտապես ինքնուրույն քաղաքակրթության տեսքով ինքնահաստատմանը գուգամիտող մշակութային մոդելի ու այդ ուղղությամբ անհրաժեշտ պաշարներ «ներդնելու» պատմական գիտակցության արդյունք էր, այլև փաստորեն նախորդ՝ խորհրդային իրականությանը **հակադրվելու** արդյունք: Թուրենյան տերմիններով խոսելու դեպքում փաստորեն այդ հակադրման պատճառը դարձան հետևյալ երկու գլխավոր համգամանքները.

1. Հայ հասարակության վերաբերմունքը (դիրքորշումը) Առաջին

19 Տես Armenian Declaration of Independence, Yerevan, August 23, 1990, <http://www.gov.am/en/independence/>
20 Նույն տեղում <http://www.gov.am/en/independence/>

Հանրապետության, ապա ԽՍՀՄ օրոք իր իսկ գոյության նկատմամբ: Այս պայմաններում ձևավորվում է «լարված դիստանցավորում, մարդկանց կոնկրետ գործունեության (աշխատանք) և պատմականության (նրանց աշխատանքին տրված իմաստը) միջև.... Մարդիկ սկսում են իրականացնել աշխատանք աշխատանքի վրա»²¹: Ինչպես բխում է Հռչակագրից, պրակտիկաների իմաստավորման արդյունքում այդ դիրքորոշված լարվածությունը նվազել էր առաջինի և աճել երկրորդի նկատմամբ և, միևնույն ժամանակ, առկա էր խորհրդային իրականության պրակտիկային զուգահեռ: Ընդունած դիրքավորումը նշանակում էր անցյալի և ներկայի ընդգծված, կարելի է ասել կոշտ տարանջատում, որը պայմանավորված էր նրանով, թե ինչպես է կատարվել այդ տարանջատումը, արդյոք համարժեք ինստիտուցիոնալ ամրագրում կստանան ապագան ու ապագայի մշակույթը: Ողջ պատմականության (առանց 20-րդ դարում տարբեր գաղափարական հիմքերով գոյություն ունեցող պետությունները միմյանցից տարանջատելու) իմաստավորումը Հռչակագրում ամրագրված է. «Գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում»²² ձևակերպման մեջ: Այսինքն՝ այդ ձևակերպումն առաջին հերթին ենթադրում էր գերագույն քաղաքական ինստիտուտի՝ պետության կայացում:

2. 1980-ական թվականների կեսերից Գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց հայոց ինքնիշխան պետականության դարավոր կորուստի վերականգնելուն ուղղված ինքնակազմակերպման համար: Սակայն միևնույն ժամանակ կարծում ենք, որ անկախացման անհրաժեշտության գիտակցումը առկա է եղել նաև դրան նախորդող ժամանակահատվածում, անկախ նրանից, թե որ մակարդակում և գիտակցության որ շերտում է ակտիվ եղել, կամ թեկուզ դրսևորվել է բարդույթի տեսքով:

Այստեղ հարկ է նշել, որ հին հանրայթներին բնորոշ ուժեղ պատմականության ազդեցության ներքո քաղաքական շարժման օրակարգ ներառվեցին ինչպես պահանջատիրության, այնպես էլ այլ խնդիրներ: Սակայն որոշիչ էր այն հանգամանքը, որ անկախության վերանվաճման գաղափարը գերիշխող, գերակա հռչակվեց, որին աստիճանակարգային (ինքնա)կազմակերպման ենթարկվեցին քաղաքական շարժման մյուս հարցադրումները: Այդպիսով՝ հայոց պետականության ինքնիշխանության վերականգնման հանրային պահանջունքը զուգամիտվեց քաղաքական զարգացման գործընթացի օրակարգի բոլոր խնդիրներին: Հենց այս շրջանակներում հնարավորություն ենք ստանում շարժման մեջ դիտարկելու ՀՀ ինքնիշխանության **հաստատման, զարգացման, պատվիրակման և խաղարկման** բազմամակարդակ գործընթացը.

1988-1990 թթ. - ինքնիշխանության վերածննդին ուղղված ազգային ժողովրդավարական շարժումը, որն իր իրավական ամրագրումը ստացավ ԽՍՀՄ-ից դուրս գալու համազգային հանրաքվեի միջոցով,

21 Турен Алэн. Возвращение человека действующего. Очерк социологии. Перевод с французского. М. «Научный мир», 1998, с. 204.

22 Տե՛ս նույն տեղում՝ <http://www.gov.am/en/independence/>

1991-1994 թթ. - ՀՀ անկախության հռչակումից մինչև պետական կառույցների հիմնադրում՝ ժողովրդավարական անցման պայմաններից բխող հետևանքներով,

1995-1996 թթ. - ընդդիմության դեմ ճնշումներից և խորհրդարանական ընտրություններից մինչև ՀՀ նախագահի երկրորդ ընտրությունները, որոնց ընթացքում տեղի ունեցան ժողովրդի և իշխանությունների միջև զանգվածային ընդհարումներ՝ հանգեցնելով ինքնության (ինքնիշխանության) ճգնաժամի,

1996-1997 թթ. - ընտրություններից հետո լեգիտիմության սուր ճգնաժամը ՀՀ իշխանությունների, քաղաքացու և հասարակության միջև առաջացրեց լիակատար օտարում, որը խորացնելով աղքատությունը, կոռուպցիան, արտագաղթը հանգեցրեց ինչպես քաղաքական զարգացման ճգնաժամերի համակարգված դրսևորման, այնպես էլ հանրային շահի գերակայության անտեսման,

1998-2008 թթ. - ՀՀ առաջին նախագահի հրաժարականը, ՀՀ երկրորդ նախագահի արտահերթ ընտրությունները և ընդհանրապես անձի, հասարակության և պետության փոխհարաբերություններում առկա օտարումը ավելի խորացավ՝ պայմանավորված 2008 փետրվարի 19-ի ՀՀ Նախագահական ընտրություններին հաջորդած 2008 մարտի 1-ի դեպքերով: Կարծում ենք, որ հենց մարտյան դեպքերի չբացահայտված լինելը խորացրեց քաղաքական զարգացման ճգնաժամը:

2008-ից մինչ 2018 թթ. - համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, ինչպես նաև Հարավային Կովկասում ուժերի վերադասավորման շնորհիվ ակնհայտ դարձավ, որ պետության ինքնիշխանության սոցիալական, քաղաքակրթական, աշխարհաքաղաքական սահմանները ավելի պաշպանված են, եթե ինստիտուցիոնալացված են հասարակության, ազգի և անհատի ինքնիշխանության սահմանները:

2018 թվականի մարտից սկսված հասարակության զանգվածային մասնակցությամբ տեղի ունեցած «թավշյա» հեղափոխություն», որը նպատակ ունի համակարգային աստիճանական և շարունակական փոփոխության միջոցով հաղթահարել քաղաքական զարգացման ճգնաժամերը և կանխել սոցիալական օտարումն ու էնտրոպիան:

3. Հայ հասարակության գործառնության վրա սեփական պրակտիկաների ազդեցությունը

20-րդ դարի տարբեր պատմական ժամանակաշրջանների նկատմամբ գրաված դիրքը հանգեցրեց մշակութային մոդելի ընտրանքի, քանի որ դրա արդյունքում հանրային քաղաքական գիտակցության մեջ այդ ժամանակաշրջանում իմաստ հաղորդվեց իր իսկ աշխատանքին, ասել է թե՛ գործունեությանը: Մշակութային մոդելի նոր կողմնորոշիչների համաձայն՝ այդ ընտրանքը կոչված էր ինստիտուցիոնալացման ենթակա անվտանգ ապագայի մեջ քաղաքացիների ջանքերի, երազանքների և սպասումների ներդրմամբ: Եվ բնական է, որ իմաստավորված անցյալ(ներ)ը հետադարձ ազդեցության կառուցակարգով պետք է ազդեին ներկայի և ապագայի ինստի-

տուցիոնալացման գործընթացների վրա: Վերը շարադրվածի համար իբրև ապացույց կարելի է բերել թեկուզ այդ ժամանակաշրջանում հայ հասարակության քաղաքական գիտակցության մեջ ձևավորված մտայնությունը, համաձայն որի՝ 70-ամյա գոյության ընթացքում ԽՍՀՄ-ը միայն միակողմանի կերպով օգուտ է քաղել Հայաստանից: Ուստի բնական է, որ սեփական պրակտիկաների նկատմամբ հայկական պետությունների գործունեություններին տրված իմաստների համադրելիության դեպքում գերապատվությունը պիտի տրվեր Առաջին Հանրապետությանը, իսկ քաղաքական տվյալ պահի՝ ներկայի վրա պետք է ազդեր Առաջին Հանրապետության օրոք ունեցած պրակտիկան և դրա իմաստավորումը: Այն առավելագույնս համապատասխանում էր հայի աշխարհաձանաչողության, ազատատենչության, ինքնանույնացման պահանջունքներին:

Այս ամենի շնորհիվ՝ հայ հասարակությունն իր կոլեկտիվ, ինստիտուցիոնալացված **ազատություն-անկախություն** ամրագրեց հռչակագրի երկրորդ հոդվածում. «**Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները**»²³: Հռչակագրային նորմերը, մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը, հետագայում որոշակիացան «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991 թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրել է 1995 թ. ընդունված ՀՀ Սահմանադրության 116 հոդվածի հիման վրա): Սույն օրենքը, ամրագրելով ՀՀ սահմանադրական կարգը, գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձևավորման հիմքը դրեց և իրավական երաշխիք հանդիսացավ՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման համար: Անկախության Հռչակագրում ապահովված էր նաև հայկական պետությունների պատմական գործունեության համակարգերի շարունակականությունը, քանի որ ինստիտուցիոնալացվեց այնպիսի համահայկական հիմնախնդիր, ինչպիսին Հայ դատն է. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին» (հոդված 11):

Որքան էլ Հայաստանի անկախության հռչակագրի 12-րդ հոդվածը ամրագրեր, որ «Սույն հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման, իսկ գործող Սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, Հանրապետության նոր օրենսդրության մշակման համար» միտքը, այնուամենայնիվ, 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության ներածությունում իսպառ բացակայում էր Հայ դատի հետապնդումն ամրապնդող դրույթը: Ավելին՝ ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված էր բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հիմքի վրա արտաքին քաղաքականություն իրականացնելու, միջազգային իրավունքի նորմերին համապա-

23 Տե՛ս նույն տեղում՝ <http://www.gov.am/en/independence/>

տասխան արտաքին քաղաքականության մեջ կառավարում իրականացնելու նորմը: Ինստիտուցիոնալ համակարգի կերտման համար անհրաժեշտ հիմնական քաղաքական տեքստի՝ Սահմանադրության և Անկախության հռչակագրի այդպիսի տարբերությունը բացատրվում է այն հանգամանքով, որ 1991–1995 թթ. ընկած ժամանակահատվածում, ի դեմս նոր սոցիալական դասի կամքի արտահայտիչ քաղաքական ընտրանու, դեռևս ընթանում էր հայ հանրության պատմական գործունեությանը, սոցիալական պրակտիկաներին տրվող իմաստավորումը, և օրակարգում դեռևս մնում էր հայ հանրության պատմականության հանդեպ դիստանցիայի «սահմանման» խնդիրը: Այս գործընթացին զուգահեռ առկա էին նաև պատմականության ոչ խորքային ընկալումներ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական հատվածային պատկերացումներով, անձնական և հանրային շահի ակնհայտ դիվերգենցիան քողարկելու միջանկյալ լուծումներով: Եվ դա այն պարագայում, երբ ինքնիշխանության հռչակումից հետո անցած այդ ժամանակաշրջանում տրամաբանական կլիներ միայն նույն շրջանի սոցիալական պրակտիկայի իմաստավորման հետ կապված քաղաքական դիսկուրսը: Քաղաքական դերակատարները դեռևս փոխհամաձայնության չէին եկել և այսօր էլ չեն եկել 20-րդ դարի պատմականության հարցում: Իսկ դա կարևոր է, քանի որ դրանով է թելադրված պետության և նրա գործառույթների որպիսությունը, ամրագրվող ինստիտուցիոնալ կարգը և դրա շրջանակներում իրականացվող (այդ թվում՝ պետական) կառավարումը: Ազատական-ժողովրդավարական արժեքային համակարգի կրող ընտրանին կողմ էր պատմականության դերի հնարավորինս նվազեցմանը և նոր՝ ժողովրդավարական ինստիտուցիոնալ համակարգի հաստատմանը: Ապացույցը նոր ինստիտուցիոնալ կարգի շինարարության ապահովմանը կոչված ՀՀ Սահմանադրության ներածությունն էր.

Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը նվիրված հայրենքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը²⁴:

Երկու հիմնարար քաղաքական տեքստերի ներածականների տարբերությունն ակնհայտ է, և կարելի է ասել, որ պատմականության որոշ հարցադրումների առումով արդեն էական շտկումներ են կատարված՝ ի տարբերություն 1990-ականների սկզբի: Այդ պահպանվել է նաև 2005 և 2015 թվականների սահմանադրական փոփոխությունների ժամանակ: Սույն հանգամանքի մանրակրկիտ քննարկումը կարևոր է այն պատճառով, որ վերջինիս նկատմամբ քաղաքական ուժերի դիրքորոշումները կարևորվեցին՝ ապահովելով քաղաքական գործընթացներում ընտրանու խմբերի փոխազ-

24 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., 1995, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1>

դեցությունները և քաղաքական համակարգի արդիականացման հրամայականները: Այսպես, 1991 թ. ձևավորված Գերագույն խորհրդում «բացահայտված» դաշնակցականներով բարձրաձայնվեց Առաջին Հանրապետության պատմականության և նրա դաշտի լինելիության հնարավորությունը Երրորդ Հանրապետության օրոք, հետևաբար և այդ հանրապետության կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգը թելադրելու և սոցիալական կազմակերպումն ուղղորդելու իրատեսական հնարավորությունը: Երրորդ Հանրապետության ինստիտուցիոնալ համակարգի շինարարության առաջին իսկ պահից այդ քաղաքական դերակատարն իրեն հռչակեց իշխանություն ձեռք բերած քաղաքական ուժի ընդդիմադիր, և այս երկու ուժերի փոխազդեցությունը հետագայում էլ բավական կոշտ բնույթ կրեց: Նմանօրինակ դիրքորոշում էր որդեգրել նաև Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, բնականաբար՝ հոգուտ Երկրորդ Հանրապետության պատմականության և նրա դաշտի: Այսպիսով, ի թիվս այլ սուբյեկտիվ և օբյեկտիվ հանգամանքների, հիմնական քաղաքական դերակատարների հակադրման պատճառներից ամենաեականը ինստիտուցիոնալ համակարգի, սոցիալական կազմակերպման վրա պատմականության, նրա դաշտի ունեցած ազդեցության չափաբաժնի սահմանման գործում առկա տարաձայնությունն էր:

Նորանկախ հանրապետությունում իրականացվող բարեփոխումների նկատմամբ տարբեր նորարարական ընտրախավերի վերաբերմունքը փաստորեն ձևավորվեց ոչ այնքան իրականացվող բարեփոխումների տեմպի, ձևերի, որքան պատմականության ու նրա դաշտի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հիմքի վրա: Նշվածի հիման վրա հստակ տարանջատված **ավանդապահների և ազատականների** քաղաքական վարքաբանությունը թեև հենվում էր պատմականության վրա, բայց գուտ գաղափարախոսական տեսակետից նրանք տարբեր դիրքորոշումներ ունեին առկա արժեքային համակարգերի նկատմամբ:

Եվ այդ էական հանգամանքն էլ ողջ քաղաքական գործընթացում մեծացնում էր ամրագրված ինստիտուցիոնալ կարգից դուրս, հետևաբար՝ ոչ ինստիտուցիոնալ կառուցակարգերով ընթացող փոխազդեցությունների չափաբաժինը: Իսկ քաղաքական ընտրանու և նրա առաջնորդի կողմից այդ հանգամանքի նկատմամբ որդեգրած դիրքորոշումը, այդ գործընթացներին մասնակցության, միջամտության բնույթն էլ դեռևս զգալի կերպով շարունակում են ազդել նրա կողմից իրականացվող քաղաքական կառավարման, պետություն-հասարակություն փոխազդեցության վրա:

Այսպիսով, **ի տարբերություն Հայաստանի նախորդ երկու պետությունների՝ Երրորդ Հանրապետության ինստիտուցիոնալ համակարգի կենտրոնական ինստիտուտի՝ պետության ձևավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ իրողություններն այլ են, և տարբերվում են ինստիտուցիոնալ համակարգը թելադրած պատմականության (ճանաչողության կերպ, կուտակում, մշակութային մոդել) և նրա դաշտի տեղակայումներից (պատմական գործունեություն, դասային հարաբերություններ և սոցիալական շարժումների համակարգեր):** ՀՀ Սահմանադրությունն ամրագրեց ազատական-ժողովրդավարական, պատմության ցավոտ հիմնախնդիրներից հնարավորինս քիչ ազդված, ինստիտուցիոնալ համակար-

գի կառուցման կերպը: Նախորդ հանրապետությունների օրոք հայ հանրության սոցիալական գործունեության որոշ համահասարակական հիմնախնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշումները տարաբնույթ ձևաչափերով որդեգրվեցին ընտրանու առանձին խմբերի կողմից: Սրա հետևանքով էլ քաղաքական դիսկուրսը և փոխազդեցությունն ընթացան ոչ միայն իրականացվող բարեփոխումների նկատմամբ ունեցած վերաբերմունքի, այլև պատմականության սահմանման, իմաստավորման շուրջ: Քաղաքական դիսկուրսի նման «ընդարձակված օրակարգը» ստեղծեց լավագույն պայմանները այս կամ այն հիմնախնդրի շուրջ ունեցած տարածայնության հետևանքով նոր ընտրանիների ի հայտ գալու համար:

Անփոփեմք.

Պատմականության՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչի դիտարկումը հնարավորություն է տալիս կարևորել հայոց մշակութաքաղաքակրթական արժեքային համակարգի, ավանդույթների, կրոնադավանական միջավայրի, ազգի մտահայեցողության հետևյալ առանձնահատկությունները:

Առաջին. ՀՀ քաղաքական արդիականացման գործընթացում քաղաքական ուժերը տարբեր կերպ են ընկալում պատմականության, պետական ինքնիշխանության և ժողովրդավարական արժեքների փոխհարաբերությունները, իսկ բարեփոխումներում անձնական (մեկուսախմբային) շահերը գերակա են պետական, հասարակական ու անձնական ինքնիշխանության նկատմամբ:

Երկրորդ. ՀՀ-ում քաղաքացիական հասարակության գերազանցապես ձևական ինստիտուցիոնալ և ոչ գործառնային կայացվածության պատճառով քաղաքական կյանքի մասնակիցների ինքնիշխանությունը թվացյալ է, քանի որ իրական դերերն ու քաղաքական գործառնայնությունը իրենց վրա, անցյալ-ներկա-ապագա չափումներում, կրում են հայկական երեք պետությունների միջև առկա խզումների ազդեցությունը:

Երրորդ. ՀՀ քաղաքական արդիականացման հիմքում դրված է քաղաքական փոփոխությունների ենթակայական ոճը՝ հիմնված հասարակությանը պարտադրված հռետորաբանության վրա: Դրանով քաղաքականության սուբյեկտների ինքնիշխանությունը դառնում է կառավարելի և կանխատեսելի, իսկ պատմականության գնահատականը՝ միաչափ:

Չորրորդ. ՀՀ -ում առկա է քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, ինքնություն, լեգիտիմություն) ճգնաժամների հաղթահարման ձգձգում, ինչի հետևանքով ընդդիմադիր և կառավարող ընտրանիները տարբեր վերաբերմունք ունեն ինքնիշխանության նկատմամբ: Այդ դիտանկյունից, զգացմունքային և խորհրդանշական հիմքերով, նրանց միջև ծավալված դիրսկուրսը տեղի է ունենում ոչ թե պատմականությունը դիտարկելով որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ, այլ 20-րդ դարի հայկական երեք պետությունների միջև ժառանգորդականության կամ խաղարկմամբ, կամ մերժմամբ:

Նշված առանձնահատկություններից ակնհայտ է, որ քաղաքական արդիականացման գործընթացում հայ հասարակությունը բախվել է «վազող արդիականացման» հավերժական հայկական խնդրին: Սա արդիականաց-

ման մի այնպիսի երևույթ է, որն արթնացնում է, թվում էր, թե վաղուց մոռացված, սակայն իրականում խոր արմատավորված և ընդամենը «նիրհող» ավանդական արժեքային շերտերը ինչպես գիտակցականի ոլորտում, այնպես էլ որոշակի սոցիալ-քաղաքական «կենցաղի» բնագավառում (տեղային հեղինակություններ, էթնիկական, կլանային ու խնամիական սահմանակարգերի վերարտադրում և հզորացում, բնակչության ինտեգրման համընդհանուր հոգևոր և ինստիտուցիոնալ հիմքերի քայքայվածություն): Ընդ որում, ակնհայտ է, որ հայ հասարակության արդիականացումը ներքուստ աններդաշնակ է և կրում է բազում կառուցվածքային խզումներ, ինչը հանգեցնում է պատմականության՝ **որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչի զուտ զգայական դիտարկմանը:**

Այստեղից էլ ծագում է քաղաքական արդիականացման մշակութաքաղաքակրթական և բարոյահոգեբանական իրավահաջորդության հիմնախնդիրը: Այս իմաստով անհրաժեշտ է կարևորել հայ հասարակության վրա տեղեկատվական հեղափոխության հակասական ազդեցությունը: Մի դեպքում՝ բնակչության բարձր կրթական մակարդակը նպաստում է մասնակցության քաղաքական մշակույթի արագ, սակայն հիմնականում մակերեսային հաստատմանը: Մյուս դեպքում՝ սոցիալական վարքի ազատական մոդելի արժեքները բնակչության մի զգալի մասի համար վերացական արժեքներ են, քանի որ չկան անհատի **գործունյա-ակտիվ կողմնորոշում**, իրատեսական լավատեսության հոգեբանություն ու **ձեռնարկատիրական-նախաձեռնողական ավանդույթներ:**

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացումը տարանջատական մշակույթի ազդեցության հետևանքով բազմաթիվ խոչընդոտների է բախվել ոչ միայն քաղաքական մասնակցության մակարդակի աճման, այլև պատմականության տեքստի համակարգային զարգացման անհրաժեշտության բերումով: Որպես արդյունք՝ իրական բազմակարծության փոխարեն ՀՀ-ում արագ տեմպերով ձևավորվել և ձևավորվում են ընտրյալ մեկուսախմբերը, որոնք ձեռնածությունների են ենթարկում «Հանրային շահը համընդհանուրի բարիքն է» քաղաքակրթիչ կարգախոսը:

Այդ պատճառով ՀՀ քաղաքական արդիականացման գործընթացում ձևավորված քաղաքական ուժերն իրենց ծրագրերում ներառել ու ներառում են հայկական պետականությունների երեք շրջանների՝ **պատմականության դաշտերին այս կամ այն չափով ենթակա և նրա կողմից ազդվող համահասարակական հիմնախնդիրների լուծումը:** Այդ տեղակայումներով ձևավորված քաղաքական դաշտը խիստ խճանկարային է, իսկ **կառավարող և ընդդիմադիր ընտրանիների** փոխազդեցության համակարգի երկու բևեռներն էլ ենթակա են շարունակական **տրոհման, միավորման ու ցրման:** Այս գործընթացում **պատմականության վերծանումը և վերարժևորումը կարևորագույն նախապայման է պետություն-հասարակություն-անձ եռամիասնության բնականոն կերպափոխման շարունակականության և կենսունակության ապահովման համար:**

Մարիամ Մ. Մարգարյան – հեղինակ է 10 մենագրության և շուրջ 120 գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել հանրապետական և միջազգային գիտական հանդեսներում: Մ. Մարգարյանը քաղաքական արդիականացման և զարգացման տեսության արդի դրսևորումների շրջանակներում ուսումնասիրում է քաղաքական ընտրանու (էլիտա) և լիդերության հիմնախնդիրները հետխորհրդային իրականությունում: Վարում է հեղինակային քաղաքագիտական բլոգ, որը գործում է հետևյալ հասցեով՝ <https://mmmargaryan.wordpress.com/>:

Summary

HISTORISM AS A COMPONENT OF MODERNIZATION OF STATE SOVEREIGNTY

On the 100th anniversary of the Republic of Armenia

Mariam M. Margaryan

Key words – state, sovereignty, statehood, historism, constitution, constitutionalism, ruling elite, person, society.

The article researches the issue of multidimensionality of sovereignty in the process of formation of the new world order. The imperative of heredity of the state sovereignty is proved as a factor of nation–state power. In this context historism is researched as a component of evolutionary modernization of sovereignty. The author is convinced that historism, including historical memory, is also an active constructive process of analysis and choise of the past. Simultaneously historism is viewed as a process of recovery of information flows, in the framework of which political time provides maximal viability and competitiveness. The notion of “choise of the past” is suggested, which on rational level allows recalling from the historical memory the part, the further generation of which will provide both viability and competitiveness with simultaneous filtering of information noise. The author is convinced that in the conditions of the new world order the process of providing of complex security should be based on three–dimensional connection past–present–future of the three Armenian republics.

ИСТОРИЗМ КАК КОМПОНЕНТ МОДЕРНИЗАЦИИ ГОСУДАРСТВЕННОГО СУВЕРЕНИТЕТА

К 100-летию Республики Армения

Мариам М. Маргарян

Ключевые слова – государство, суверенитет, государственность, историзм, конституция, конституционализм, правящая элита, личность, общество.

В статье исследована проблема многомерности суверенитета в условиях становления нового миропорядка. Императив наследственности государственного суверенитета обоснован как фактор мощи нации-государства. В этом контексте историзм изучен как компонент эволюционной модернизации суверенитета. Автор считает, что историзм, включая в себя историческую память, является также активным конструктивным процессом анализа и выбора прошлого. В то же самое время, он является процессом восстановления информационных потоков, в рамках которых политическое время обеспечивает максимальную жизнеспособность и конкурентоспособность. Предложено понятие “выбор прошлого”, которое дает возможность на рациональном уровне вызывать из исторической памяти ту часть, последующая генерация которой обеспечит и жизнеспособность, и конкурентоспособность, фильтруя информационный шум. Автор убеждена, что процесс обеспечения комплексной безопасности в условиях нового миропорядка должен основываться на трехмерной связи прошлое-настоящее-будущее трех армянских государств 20-го столетия.

REFERENCES

1. Armenian Declaration of Independence, Yerevan, August 23, 1990, <http://www.gov.am/en/independence/>
2. **Benethon F.** Vvedenie v politicheskuyu nauku. M.: Ves Mir, 2002 (in Russian).
3. **Hakobyan A.** Hayastani khorhrdarany ev qaxaqakan kusaktsutyunnery (1918–1920). Er.: HYD hrat., 2005 (in Armenian).
4. Hayastani Hanrapetutyani Sahmanadrutyun, Yerevan, 1995, (in Armenian), <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1>
5. **Kissinger H.**, World Order, Penguin Random House LLC, New York, 2014.
6. **Klod L.-S.** Uznavat drugikh. Antropologiya i problem sovremennosti/ Per.: Chebucheva Yelizaveta. – M.: Text, 2016 (in Russian).
7. **Lints Kh., Alfred S.** Joxovrdavarutyann anclnelu ev joxovrdavarutyani kayacman khndirneri. Haravayin Evropa, Haravayin Amerika ev hetkomunistakan Evropa. – Er.: Kovkasi institute, 2010 (in Armenian).
8. **Nikitina A.** Historism socialno-politicheskogo yavleniya (Otnoshenie sociologii i istoriografii v svete problem istorizma). – Polis, 2000, N5, s.167 (in Russian).
9. **Parsons T.** Sistema sovremennikh obshestv/ Per. s angl. L.A. Sedova i A.D. Kova-

- leva. Pod red. M.S.kovalevoy. M.: Aspekt Press, 1998 (in Russian).
10. **Poper K.** Bats hasarakutyunn u nra tshnaminery (targm. S.Harutyunyani). – Er.: Hayastan, 2001 (in Armenian).
 11. **Pye L.** International Relations in Asia: Culture, Nation and State, The Sigur Center for Asian Studies, July 1998, <https://www2.gwu.edu/~sigur/assets/docs/scap/SCAPI-Pye.pdf>
 12. **Qajaznuni H.** H.Y. Dashnakcutyuny aneliq chuni aylevs. Erevan, 1994 (in Armenian).
 13. **Smith A.** Myths and Memories of the Nation, Oxford, New York, 1999.
 14. **Solovyev E.** Sudbicheskaya istoriosofiya Khaydegera – Proshloe tolkuet nas. M., 1991, (in Russian),
 15. The Concise Oxford Dictionary of Poltiics/ eds. McLean I. and McMillan A., 3rd edition, 2009.
 16. **Turen A.** Vozvrashenie cheloveka deystvuyushogo. Ocherk sociologii. M.: Nauchniy mir, 1998, (in Russian), http://socioline.ru/files/5/39/alain_touraine.pdf
 17. **Vagharshyan A.** Hayastani arajin hanrapetutyany gortsadir ishkanutyany hamakargy (1918–1920). Er.: EPH hrat., 2012 (in Armenian).